



ՀԻՆ ՀԱՒԱՏՔ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Գ.

ԲՆԱԳԱՇՏՈՒԹԻՒՆ. — Գ. ԶՈՒՐ, ԶՐԱՅԻՆ ՀՐԷՔ, ՕԴԵՐՆԻՈՑԹ:

Գ. ԵԱՌՈՑ ՊԱՇՏՈՆ, ԵՒ ԱԶԹԱՐԱԿԱՆ ԲՈՅՈՒՐ.

(Տես յէջ 94)

Գ. ԶՈՒՐ. — Կենաց տնտեսութեան մէջ
 ո՛րքան անհրաժեշտ կարեւոր է ջուրն, աւելի
 քան զկրակ, գոնէ քան զայս պակաս պաշտելի
 կամ պատուելի պիտի չլլար ի նիւթապաշտից,
 և այնպէս եղած է առ այլևայլ ազգս, որք ծո-
 վեր, գետեր, աղբիւրներ աստուած կամ աս-
 տուածային ճանչցեր են: Կրակի վրայօք ը-
 սածններէս կ'երեւի՝ որ Հայք ցամաք երկրի բը-
 նակիչք (այլ այնպիսի երկրի մի՝ որ հին Ա-
 սիոյ ամենէն գլխաւոր տէրութեանց երկիրն է-
 բու ջուր մատակարարէ իր բազմութիւ գետե-
 րով, մանաւանդ Եփրատով և Տիգրիսիւ), գե-
 տոց ակունքը կամ աղբիւրները սրբազանք
 են, և հօն՝ ինչպէս տեսանք վերը՝ թափէին
 անոնց քեռ (կրակի) մոխիրները. և եթէ այն
 յիշեալ լեռնոտ կողմանց մանր գետակներն այլ
 պատուած էին, ո՛րքան եւս առաւել մեծերն,
 մանաւանդ Հայ երկրի բնագետ Երասխն: Մու-
 ցուած են հիմայ ազգային աւանդութիւնք ա-

սոր նկատմամբ. Մովս. Խորենացի (Ա. ԺԲ)
 կ'ըսէ միայն, թէ գետն պայպէս կոչեցաւ յանուն
 թռուան թռուի հայկայ, առանց պատճառ յի-
 շելու. բայց Պլուտարքոս՝ Յաղապս գետոց զբերն
 մէջ՝ մէկ երկուքը յիշէ. նախ՝ զԱրաքս (ինչպէս
 կոչեն օտարք՝ զգետն՝ 'Αράξης, Araxes) ա-
 նուանէ որդի Պիստիսի՝ որ իր պապուն՝ Ար-
 քեշի հետ կառելով՝ իշխանութեան համար,
 նետահար սպաննեց զնա, և ըրածին վրայ
 զղշալով կամ պատժուելով՝ մոլեգնեցաւ և
 ձգեց զինքն ի գետն, որ առաջ Բակտրոս
 (Բագ-Տիր?) կոչուի եղեր: Արդեօք Բելի և
 իր թռուան Արքեշի անունները՝ հեռուանց չի՞
 յիշեցներ այս աւանդութիւնս: Երկրորդն այլ
 գուցէ աւելի հեռու չէ. Արաքս՝ իր սահմանա-
 կից Պարսից հետ պատերազմ կ'ունենայ.
 պատգամք խոստանան իրեն յաղթուիլն՝ եթէ
 երկու ազնուական կոյս աղջիկ զոհէ. նա խը-
 նայելով իրեն զաւակաց՝ Մեխաչկ (Μεγαχλ-

Կոչ) անուամբ ազնուականի մի գտտերքը առնուել է զօհել կու տայ. հայերեւին՝ վրէժխնդրութեամբ յափշտակել և սպաննել Արաքսայ գետերը և փախի ի Սիկիթիա. իսկ սա սրբոն ցաւէն յուսահատեալ ինք զինքը նետել է գետն Ալմուս կամ Ալմոն, որ կոչուի Երասի: Այս անուանքս այլ արդեօք Արմէնի և Մանաւակայ նմաններ չեն լսեցըներ հազարաւոր տարիներու անցեալէն: Ասոնց հետ յիշելով նոյն հեղինակին Երասիայ եզերքը եղած լերին, քարին և բուսոց համար ըսածներն այլ, աներկայ կ'երեւի Երասիայ պաշտելութիւնն կամ սրբազնութիւնն: — Ըստ ակնարկութեան ինչ ուրիշ հին պատմելի՝ Եփրատ գետն այլ՝ որ յերկրէ Հայոց բոլս, իբրեւ սրբազան պատուելի էր անոնց:

Բայց Հայք աւելի քան զԱղբերս և զԳետս և քան զմեծն իսկ Ովկիան՝ (զորդին երկնից և երկրի և հայր ամենայն գետոց՝ ըստ առապելաց Յունաց), մեծագոյն յիշատակ մ'ունէին այս լոյծ տարեր՝ Զրհեղեղն. որ թէ և ամեն հին ազգաց աւանդութեան մէջ զըստով այլեւայլ կերպով, բայց քիչ կամ հազիւ ազգ կայ որ կարենայ այն աշխարհակու ջրերէն մարդկան սերունդն ապրեցընող Տապանը՝ իր երկրին մէջ լեռան վրայ դադրած ըսել, բաւական կամ չափաւոր հաւանական փաստով: Մեր խնդիրն այս բանին վրայ չէ այս տեղ. շատ է մեզի Ս. Գրոցն իսկ ան ազգաց պատմութիւնն, և թարգմանչաց և մեկնաց վրէպելութիւնը՝ Այրարատեան և Կորդուաց լեռանց վրայօք, որոց ստորոտը բնակողն՝ իբրեւ անուրանալի հաւատք համարին մինչև այսօր. այլ խնդիրն այս է, թէ հին աստիճանաւի հաստատութեամբ ընդունէին զայս՝ այդ լեռանց բնակիչքն, և լեռանց այլ՝ վրանին գտնած կամ կարծուած Տապանին այլ՝ յարգութիւն կու տային, և պէսպէս կերպով Զըրհեղեղի յիշատակը կատարէին: Այն տօնից և պաշտաման նշմար մ'այլ, ինչպէս ուրիշ բաներու, անցեր է ի նոր և ի սուրբ կրօն ազգայնոց, Վարդապետի հաշտաբառ տօնին՝ ջրոց ցօղմունք ցրմունք և խաղեր ընելով, ինչպէս ամենուրեք ծանօթ է, և կրկնեւն աւելորդ: Նոյնպէս և Տապանն ընդունող լեռանց համար ըստածքն առ մերայինս. ինչպէս է, ջրոց

նուազելու աստիճան Տապանին տատանելով յաւիտէն լեռնէ ի լեռ, հանդրստեան յարմար դիրք մը գտնելու, և գալով այս շատ անգամ յիշուած Աղթամարայ ծովուն կողմերը, անոր հիմայ ծանօթ լեռան մի ըսել,

« Գրգուռ, ընկալ զիս », և ասոր պատասխան,
« Գրնա ի Մասիս »,
« Զի բարձր է քան զիս »:

Բայտ է այսոր բանաստեղծական գիտ մ'ըլլալն, թուի թէ և ոչ շատ հին. բայց հնագոյն է վերոյիշեալ Հոփսիսիմեանց՝ (այս նոր տապանի նորատեսակ աղանեսաց) թափառանաց աստիճան կապրիլն քիչ մի Սողոմոն կամ Սողոմոն կառած լեռան ստորոտը, ի Բերկ. բացառ կամ Բագրացաց գաւառի, (որ ոչ է վրանայ մօտ ծանօթ գաւառն), այլ Կորդուաց Պոֆանի կողմերը, ուր ծանօթ է հիմայ Պիտրէ անուամբ տեղին և Սոչիվա լեռն, որոյ անուամբ և գաւառ մի կոչուէր Սոչիվա. « Վասն այսր լերին ասի յԱսորոց, » թէ ի նուազել ջրոցն հեղեղաց՝ եհաս տա. » պանն ի գլուխ լերինն՝ որ է Սարաբա. » դայ. և ընդ մէջ անցեալ Սղոմաձուն՝ » արգելու. գնաւն. և ասաց Նոյ՝ որդւոցն » իւրոց, Ո՛, Սաղուփ. այսինքն թէ՛ Սղո. » ցաձուն զիպեցաւ նախ. և զնոյն հաստա. » անցին ի մուտս լերինն գնաւուն Սարա. » իսպ. և զանուն քաղաքագրեղն թմենի » (կամ թեմնի, թեմնի), այսինքն թէ՛ յայսմ » տեղով ութ ոգիք ելին ի ասպանէն: (Ե՛հա. » ւեցընէ պատմիչն). Եւ այսոքիկ թէ արդարք » կամ՝ սուրք՝ ինձ ոչ է փոյթ. բայց միայն » զի հանցեցողից զմանկապունի քո մտացդ » զտարփանս. վասն այսորիկ գրեմ՝ քեզ զբը. » նաւն ». զայս կրկնեմ և ես ընդ խորե. » նացայն, որոյ ոճն յայտնուի այս դրուածէս:

Բայց թողլով հին ասորի աւանդութեանց նմանութիւնն ընդ այլոց սեմական աւանդութեանց՝ զոր յիշէ Եւսեբիոս ի ժամանակագրութեանն, յորմէ և խորեհայի և այլք, կարծեմք թէ Հայոց Վիպասանից մասն այլ զպած է այս տեղ. ուր որ իրենց երգած մէկ մեծ դիւցազն՝ Այրաքաւ կոչեալ Սմբատն բազրատունի՝ սպարապետ Բ Արտաշիսի, որ այն կողմերէն Այիկա անուամբ ասորի աղջիկ մի

առնելով ի կնութիւնն¹, անոր սիրոյն և անուան յիշատակ շինեց աւան մի գեղեցկավոր գե-
տեղերքի վրայ, « ի ծառաւէտ ընկողութեան տե-
» ղիս », մաս մշկաբեր լեւան մի և գետոյն
կամուրջներուն, « ի կողման Տմարեաց »: —
Այս նկարագրական և դիւցազնական տե-
ղուանքն այլ սրբեցին հրաշագեղ կուսանքն,
որք ի Սողոմոնի ստորոտը բնակած ասեննին՝
աչաց ցաւի հիւանդութիւն ունեցան, « և կա-
» ցեալ յաղօթմ² երկու Աղբերք բոխեցան,
» որ է ժանգ ջրոյն կառնիք և ալիտակ. և
» մինչեւ ցայսօր օգնէ աչացաւաց յանուն
» Սրբուհեացն³: Եթէ պատմական հարկ էր
առաւելեալատն ջրերը յիշել, հոգեկան հարկ
մ'այլ համարուի՝ յիշել այսպիսի անձանց խ-
րենց վայել վարդազոյն և բիրեղանման ջը-
րեր բոխեցնելը: — Փոխան այս գոյնզգոյն
շերտու՝ հիմայ ջրիտառնայ Հայք անեակ մի
յարգութիւն կ'ընծայեն Ղազարեայից, ուր
որ սրբազան յիշատակ մի ըլլայ, կամ բժշկա-
բար համարուի, Սրբոց արդեամբք:

Թէ և մեր գրուածոյ կարգն զեռ տարերաց
պաշտաման վրայ է և ոչ կենդանեաց, այլ
նորէն ջրերու վրայ չղաճալու համար, այս
տեղ յիշենք և ինչ որ կ'աւանդուի ի մերայոց՝
Ջրաբնակ պաշտելեաց համար, զոր երեւա-
կայութիւն մնուցեր է այեաց մէջ, քիչ քիչ
հեռանալով նահապետական պարզ յարգու-
թենէ՝ զոր ընծայէին անոնց, կամ բնութեան
միւս մեծամեծ կերպարանաց համար, կամ
պատմական յիշատակաւ մի, ինչպէս Զրհե-
ղեղին: — Մեր երկիրն ծովեղեցեայ չըլլա-
լով՝ չէր այլ կրնար ծովային հաւատալիք
կամ պաշտելիք հնարել, և ինչ որ այնպիսի
բան նշանակէ առ մեզ՝ օտար լեզուաց ա-
նուններէն առած է՝ Թարգմանութեան հա-
մար: Սակայն տեսանք որ շատ գետեր և
լճեր ունի. երբ մղար կարծիք զօրացան՝ ծը-
նան և ջրային հրաշալիք կամ Հրէշք. որոց
ամենէն սեփական ազգայինն կ'երեւի ընդ-

ղայն՝ յատուկ բառի, որոյ ծագումն անյայտ
է, եթէ ոչ ընկղմել բառէն ըլլայ. իսկ իւ-
մասանն՝ աւելի ծովու հրէշ ցուցնէ, իբրեւ
զՆերեան (Nereides) Թունաց, այլ և ա-
ւելի ահաւոր և փեսասկար. այնպէս որ՝ ի
Թարգմանութեան (Սկիւթեանի Միկն. Մատ-
թէի), փոխանակ Թունաց կառողած Երիննեայ՝
Ընդդայ գրուած է. և զի սա կին էր՝ կնո-
շարէմ կերպարանէին Յոյնք: — Ասոնց առաս-
պելաց մէջ նշանաւոր և հանրածանօթ են և
Սկիւթիոյ նեղուցի յորձանաց և քարափանց
միջոց՝ կարծուած երկու կէտանձն կէտուն կեն-
դանիք, մին Սկիւլլա՝ երբեմն գեղեցիկ Յա-
ւերժահարսն մի, միւսն Եպրիսպոսիս (Scylla,
Carybde) երբեմն կով գողցող կին, իրենց
նաւորաց հասուցած վախեալ և փեսասով: Ա-
ռաշնոյն յոյն անունն յիշէ Խարսեղ վ. Մաշ-
կեւորքի (Միկն. Մարկ. աւետ.), ազանութիւնը
նմանոցներով՝ « Գազանալէմ և Շընդոսնգն
» երեսաց կնոջ, և Սկիւլին որ Շոռն երեքգլխի
» ասեն (վեցգլխի է ըստ Թունաց), Հիդրոն՝
» (ազամազուխ վիշապն) զոր այլք պատ-
» մեն »: — Ասոնց և Ընդդայի նման բան
մ'այլ երեւակայած են Հայք, որք ի Թարգ-
մանութեան՝ Սկիւլլայն և Եպրիսպոսին միան-
գամայն Ապուլոք կոչեն. սա՝ անունէն այլ գու-
շակուի յունականաց նման ճապոտով և ճանկով
հրէշ գազան մ'եղած ըլլալ. — Բայց Հայոց ո՞ր
շրոց կամ ո՞ր խորոց մէջ բնակէին, չեմ
կրնար քուշակել, բայց եթէ բառը հնարու-
ղին մտաց մէջ: — Որչափ այլ այս հրէշք
չար և փեսասով էին, չարագոյն ևս էին իրենց
խաբուսիկ գեղեցկութեամբն և ձայնովը, զոր
մեր ոչ շատ հին վարդապետաց մէկն՝ այսպէս
նկարագրէ. « Ասեն իմաստունք, թէ է կենդանի
» ինչ ի ծովն, որ ի միջոյն ի վեր ունի գլեր-
» պարանց գեղեցիկ կնոջ, և ի վայր կոյս՝ զճանկ
» արծու, և ունի քաղցր ձայն. զի յորժամ
» լսեն նաւալարքն՝ ի քաղցրութենէն ննջեն.
» և յորժամ իմանայ գազանն՝ թէ ի քուն
» են, զայ և յափշտակէ զմարդն ի նաւէն,
» և տանի պատառէ և ուռէ. իսկ իմաս-
» տունքն խնուն զականջն իւրեանց, և կա-
» պեն զինքեանս ի գերան արմիռնին (կայ-
» մըն), և այնպէս փրկին »: Այսպէս ը-
բաւ Ողիւսեւս՝ երբ Նապրի կղզոյ և Խոտա-

1. Օրինակ մի գրէ, « Եկեալ յաւանն Սմբա-
» տայ, որոյ յանուն կնոջն՝ որ յԱսորից ա-
» ուեալ Արիկա. և է Արիկա Սմբատայ »: Ուրիշ
օրինակ. « Եկին յաւանն Սմբատայ՝ ի կողմ-
» ս ցեալն Արիկէ, որ է Ուրիկ, կանաք Սմբա-
» տայ » և անուն կնոջ նորա Արիկայ »:

լից ախանց միջէն կ'անցնէր նաւով. և թէպէտ Սիրենեան քերք (Sirènes) անուշիկ ձայներն՝ իր ակընջաց թխած մեղրամոմն այլ հալեցին, բայց չի կրցան անոր ձեռաց և ոտից կապանքն այլ կտորել, որովք խորամանկ զիցացն զհրէք պնդապինդ կապել տուեր էր կայսին, որ ջըլլայ թէ այն կախարդաց երգերէն զմայլած՝ երթայ բոլորներին, և ուրիշներուն պէս չուտելով չխմելով՝ մահի մեռնի. իսկ Սիրենայք ամբընայով իրենց յաղթուելուն՝ նետուեցան ի ծով և ի քար դարձան, և նկարուին կէս կին կէս ձուկն:

Դրանոթ է առ մեզ և Նիանգ կամ Նա. հանկ անունն, որով կ'իմացուին ջրաբնակ և մանաւանդ գետաբնակ հրէշք կամ գազանք: Խորենացոյ կոչուած Ախարհագրութեան օրինակի մի մէջ գրուած է. « Առեն, թէ » Նհանգ կայ յԱրածանի (Ֆազրեւանդայ և « Ծարօնոյ գետն, Մուրատ չայ), որպէս » յԵփրատ. զոր՝ հաւատարմ գիտեմք կենդանի » Քարքաշամ զուգեալ, զարիւնն ծծեալ և » թողեալ. զոր ոմանք ասեն՝ թէ գազան է » և չէ դեւ, այլ գազան. զոր Յովհան (Ոս. » կրեբերան) վասն զստերն Հերողիադայ ա. » սէ, թէ քան զՆհանգն ծովայինս արեւնար. » բու էր »: Ասոնց համար այլ կ'ըսուէր, թէ Սիրենայց կերպարանքն ունէին, և լուզորդոց ոտից պլլուելով՝ խեղդէին: Մեր թարգմանութեանց մէջ՝ տեղ տեղ Նհանգն՝ Զիագետի կամ Կոկորդիլոս նշանակէ, և ստուգիւ յետինն է բոտ պարսկի լեզուի, ڤنگ: Մեր վերոյիշեալ գետոց մէջ վկայեն ինչուան հիմայ տեղացիք՝ որ գտուին մեծամեծ ձկունք մարդաչափ: Բայց հասարակօրէն այլ Յունաց Նայադ (Naiades կոչած ջրային Յաւերծահարսուները նշանակէ Նհանգն, զորս կերպարանէին եղեգներով պսակուած և սափորի մի վրայ ճրկուած. բոտ աւանդութեան նոցա՝ ասոնք Դիոսի դստերը էին: Իսկ մենք արդեօք կրնանք առանց մեծ յանգընդութեան ըսել, թէ մէկ հայկական չաստուածոյ գտերը կամ թուոնայք եղած ըլլան. որովհետեւ մեր լեզուին մէջ արմատ բառն Նայ՝ նշանակէ խոնաւ, թաց, և կ'ըսուի Նայ տեղեր (ի Բժշկարանի). « Նա. յական շողալ խոնաւութիւն », (Ոսկիբ. Մեկն. Թղթոց, եր. 803): — Միջին կամ աւելի

մօտ դարուց ազգային գուսան մի՝ ուրիշ ա. նուամբ յիշէ զՍիրենայս՝ իր սիրելոյն բաղդատելով.

« Զբւայ թռչուն ի Եղբո՝ քեզ նրմանակ,
Եւ ու իրպունն դատեղքին քեզ օրբնակ »:

Այս կակաղ տարրը թողլու ասեն՝ յիշենք աւելի կակաղաղոյն անգայտ և անշուշտիկ տարրն այլ, որոյ հետ յիշուած է ի գիրս մեր, եթէ ազգային մասաց ծնունդ է եթէ օ. տար, չէ յայտ, բայց բառերն հայաձայն են: Այս նրբագոյն կամ անգայտ տարրն է Օղ, (Աղ) և Հով. որոց վրայօք (հաւանօրէն թարգմանեալ) գրուածոց մէջ կ'ըսուի. « Շտեմարան » իմե(է) ի ջուրս, յորմէ օղք ելանեն ի դուրս, » Հասապին, Քասապին, Սարսապին, Մա. » շատն կամ Նագաւան. եւք սոցա ի ծովէ են » և գնացք սոցա յերկինս »: Եթէ ոչ ստոյգ՝ գեղեցիկ գրոյց: — Որոշակի եւս ոչ միայն ի ջրոց՝ այլ և ջուր համարի, « Հովմ. Զմբ » է լայնանիստ շտեմարանափակ, օղք ան. » հանգիսաք. եւք նոցա յարտաքին ծովէ, » և գնացք նոցա ի ներքին ջուրք. . բնոյ մէջ » ջուրք և երկնի՝ Օղք են, և քաղամ ան. » գամ յօգուտ յարեբաց և յերակս ջրոց » յաճախեն. և են այսօրիկ, Յասսմն, Սոռն. » հապ, Անագռմն, Նեսփա. այսօրիկ են » որ շարժմունս անեն, և երկնիք հաստատ » լինի վասն երկրի »: — Այս անուանք հետեւանն ի հայկականէ, յունարէն և արաբիկ լսուին: Առաջնոց մէջ յայտնի է Հոդմոց պաշտօնն, և անոնց հայրն և չաստուած Եռչուս. նոյնպէս և անուանքն, յորոց ոմանք հիմայ այլ իբրեւ սոսկ զանազան հովիբու նշանակէ և որոշիչք՝ գործածուին: Թէ մեր հին Հայք այլ յատուկ անուններ ունէին Հոդմոց և պատուէին, յայտ չէ, բայց շատ հաւանական, թէ վերոյիշեալ օրոց յիշատակներն և թէ հրոյ և ջրոյ և քարանց. բայց ի գիրս գործածուած անուանք Հոդմոց՝ յունականք են, յետոյ քանի մ'այլ արաբականք, զորս յիշել մեր նպատակէն դուրս է:

Բայց այս օգական երեւութից մէջ՝ մէկն և հզորագոյնն՝ ազգային առասպել և հաւատք մի երեւցընէ. այն է հիմայ (Ս. Գրոց Եղիայի պատմութեան մէջ քաթ առն՝ մարդու ափքը սուածը սխալ կարդալով) Թաքառ կոչուածն,

որ է փռ. Trombe marine կամ terrestre. նախնիք այսոր Վիշապ բաժն են, և ո՞ր գիտէ ինչ աւանդութիւններով: Միշին դարու յիշատակարանաց մէջ՝ Զինամբ կոչուած է. թէ ի հնուց այլ այսպէս լուծած է թէ ոչ լաւ երեւակայութեամբ յարմարած է. որովհետեւ շատ հեղ ծովու վրայ կ'իջնէ սեւ սիւն նաձեւ, ամպատեսակ է ձկան պէս զալարելով շարժի, և վեր քաշէ զուր և զձուկն, և ուրիշ նիւթեր և թափէ ի վերայ ցամաքի: Այստեղ աւելի թեթեւն է փոփոքրիկն. բառեր նորազական մասնիկն այլ առասպելի նշան մի կու տայ: Վերոյիջեալ զբոլոր հողմաց վրայ՝ զայս բացատրէ. « Հատուած է պտուտեալ ներքուստ ի վեր փողելով »¹: — Կլրնամբ կասկածիլ թէ Մրրիկն եւս իր աւանդութիւնն ունեցած ըլլայ. զոր նոյն հեղինակ աւելի բնաբանօրէն բացատրէ. « Մրրիկը՝ հալ և » հում հողմ արտադրեալ², հանգերձ ամպով » շրջաբերեալ յընդդիմահարութենէ խիստ » մարմնոց »: — Նոյնն՝ ի հրաբլրից ուժով ելած օդը վհական կոչէ, « որ ի զուր քար » ընկնեալ կամ հող կամ կաւ »: Իսկ կրակ հանողը՝ կոչէ, « Լիպարեան, որ հուր հնչէ » ի Սանդարամետէ »: յայտ է որ ի Յունաց առեալ, ըստ որոց՝ Լիպարոս հալածեալ յեղբարցն՝ գնաց այս անուամբ կոչուած կըղզին՝ մին յեղեղեանց, ուր թաղաւորէր Հողմոց շատուածն:

Հրապտրական անուն մի է և Շամանսդաղն, ըստ հեղինակիս՝ « Աւելորդութիւն

1. Երկու տեսակ օգերեւոյթք՝ միանգամայն բացատրէ Անանիա Շիրակացի կամ օրիշ հին բնախօս մի. « Յաղաքս փորորիկ հողմոց, զոր » ի բաղադանս և յառասպելս վիրապ հանել աւ » սեն. փոթորիկն հողմ է՝ որ ի յերկրէ ի վեր » ելանէ, ուր վիհք ինչ հատեալ լինին ի քակ » և ի խռոպացեալ տեղեաց ինչ, որ ի փող » անկեալ ընդ երակս երկրի, և ել ինչ զտեալ՝ » միտառողով ի վեր դիմաւ թանձրացեալ ամ » պով ահագին զորդիւնս առնէ, մինչեւ զմայ » ըրս յարմատոց ի բաց հանել, և վէմ խլել, և » զինչ գտանէ՝ ահագին ձայնիւ վերացուցանէ » և ընկնեալ յերկիր. և այս է զոր Վիշապ հա » նել սանն »:

2. Յօրինակին գրուած էր արարտեալ:

» ամպոց զառ ի շուր փոփոմանց » և յիշեցընէ մեր Բ Արաշխի մահուան մօտ փափաքը. « Բաղձայր մըղոյ մրկեալ ծխոյ՝ շա » մանդարեալ ի վերայ շինից և քաղաքաց. » Ո՞ր տայր ինձ գծուի ծխանի, առեր, և » զառաւօտն Նաւասարդի. զվազելն եղանց » և զվազելն եղբերուաց. (մինչ) Մեք փող » հարուաք և թմբկի հարկանէաք »: — Աւաղ իրեն:

Վ. ՄԱՌՈՑ ՊԱՇՏՈՆ, ԵՒ ԱԼԹԱՐԱԿԱՆ ԲՈՅՈՒՔ. — Յամաք երկրի վրայ յետ լերանց ամենէն մեծ և լեռնական բնական առարկայը՝ են Մառներն, երբեմն և ահարկու՝ ուր թանձր Անտառ ձեւացընեն: « Կարծէին հեթանոց, » կ'ըսէ մեր մեկնիչ վարդապետաց մէկն, թէ ի » ներքոյ անտառախիտ ծառոց են աստուածք, » կամ ի խորածորս»: Ոչ միայն մեծութեամբ այլ և գերեցեալութեամբ և պէսպէս օգուտներով՝ թիւրաւատ մարդկան մտաց վրայ հզօր ապաւուրութիւն ըրին և կ'ընեն, և աւելի քան զանազործարանն անշարժ արարածս (ինչպէս Լեբինք և Քարինք). վասն զի ոչ միայն արտաքին և երեւելի մասեր ունին կերպ ու կերպ կազմուածութեամբ, գոյներով և յատկութեամբ, այլ և ներքին՝ թէ և պարզ՝ զօրծարաններ, որովք՝ յերեւան զան, աճին, սնանին՝ իրենց յատուկ բուսական կեանքով, և ըստ այնմ մեռնին եւս, ցամաքելով և չորնալով. բայց զեռ պիտիւնին այլ (փայտերնին) շատ բանի պիտանի է, մանաւանդ շինութեան տանց և անոնց կահից, այլ և տաճարաց: Ապա զարմանք չէ թէ և Մառք՝ շատ ազգաց մէջ կերպով մի սրբազնացեալ են, և եղբր է Մառապաշտութիւն. մանաւանդ որ ծառերն կերպով մ'այլ ինքնին հրաւիրէին զմարդիկ ի պաշտօն, ոչ անշարժ և անձայն մընալով քարանց նման, այլ հովերու հետ պաշնակցեալ՝ ըստ զօրութեան նոցա կամ աւելի և պակաս ուժով փչելուն, անոյշ կամ ահաւոր ձայներ կ'արձակեն, որպէս ամենքն գիտեն. և քիչ մ'այլ աւելի գիտողաց միաք՝ ինչպէս ուրիշ շատ բաներու նկատմամբ՝ կու դիմեն յուսական առասպելաց, և անոնց հաչկեալ պատգամախօս Կաղնեաց, որոց զլիաւորն էր յեպիւռոս՝ Դոդոնի անտառն:

Կաղնի ծառն իր մեծութեամբ և ընդարձա-

կութեամբ, հնութեամբ, այսինքն՝ դարեր դիմա-
նայով, տերեւոց և կորեանց (պտոց) ձեւով՝ ոչ
միայն Յունաց այլ յատուկ և կելտաց սրբազան
էր. ասոնք այլ իրենց թաւ կաղնեաց մէջ ունէին
պատգամախօս Դրուիդներն և Դրուիդուհիքն ։
Ս. Գրոց նահապետական պատմութեան մէջ
այլ յիշուին ոչ միայն կաղնին Մամբրէի, այլ
և ուրիշ ծառեր, Սաբէկն և Բեւեկն, Տանձին
և Մորեմին, թող զՄայրն Լիբանանու, որք
ոչ միայն թիւրքաւատից, այլ տեղ տեղ և աս-
տուածապաշտից, գէթ պատուելի յիշատակաց
տեղիք էին. մանաւանդ որ շատ հնդ Աստուած
այնպիսի տեղուանք կը ցուցնէր յայտնուելու
նահապետաց և մարգարէից, իբրեւ աստուա-
ծային ժամադրութեան վայր. և երբ Դաւիթ
կու հարցնէր Աստուծոյ՝ թէ երբ ելնէ թշնամ-
ւոյն դէմ ի պատերազմն, կ'ազդուէր իրեն՝ թէ
երբ Տանձեաց կամ Լալօնից անտառին շէրն-
կոցը լսէ ։

Հայկազանց ականջն այլ խուշ չէր այսպիսի
տերեւալարծ քնարներու. եթէ իրենց բնա-
վայրն չուներ յունական կամ գալլիական հըս-
կայ կաղնիները, ունէր հսկայազոյն Սոսինքր,
որոցմէ ոմանք դեռ մինչեւ այսօր կեան և կե-
նան այլեւայլ կողմեր (ինչպէս յՈրդուատ Գող-
թան, ի Վարդաշէն Գանձակայ, ևն). որոց մե-
ծութիւնն կամ հաստութիւնն գերազանցէ թեր-
եւ քան զամեն իրենց ազգակիցս, ոչ ոտնա-
չափով այլ զրկաչափովք համբելով ։ Հին Հայոց
Դիողոնն այլ էր յԱրմաւիր, ըստ աւանդութեան՝
շինուած Հայկայ թոռներէն, իսկ մօտի ծառերն՝
անոր անդրանկան՝ Արմանակայ ձեռնառունկը
էին. և իր ցեղին վերջին պայապաւան՝ Անուշա-
ւաճ՝ նոյն իսկ ծառոցն անուամբ Սօս կոչուե-
ցաւ, « Քանգի ձօնեալ էր կ'ըսէ պատմիչն
(Խորեն. Ա. Ի.) ի Սօսիւն Արամենակայ » որ
» յԱրմաւիր. զորոց զսահարթուցն սօսաւուն,
» ըստ հանգարտ և կամ սաստիկ չնչեւոյ օդոյն՝
» ոստոց եւեթ շարժումն, սովորեցան ի հմայս
» յաշխարհիս Հայկազանց, և այս՝ ցրազում ժա-
» մանակս » ։ — Գրչազրաց տարբերութեամբ
Անուշաւանի համար ըսածն է՝ Սօս անձաւանէք
կամ Սօսանուէք, ինչպէս կարդացեր է և Գր.
Մագիստրոս. « Սօսին յԱրմաւիր՝ առ դրան ա-
» պարանիցն արբունի, զոր Անուշաւանն պա-
» տուէր՝ Արայեանն մանուկ, վասն որոյ Սօ-

» սանուէրն կոչուր » ։ — Ընթերցողք խոր-
հրդաթծեն անշուշտ՝ որ այս ծառի անունն տուած
պիտի ըլլայ ընդհանուր սահարթաւոր ծառոց
ձայնին անունը, Սօսիւն կամ Սօսաշիւն և
կամ Սօսափիւն. ետքին աւելի սաստիկ ձայնի
նշանակ է, միանգամայն և անարկու ։ — Լա-
տինք՝ Պահապան Ոգոց նուիրած էին, այս
ծառս. և իրենց ծննդեան աւուր յիշատակին՝
Սօսի ձնդերով պսակներ նուիրէին անոր, Հայք՝
իրենք՝ զիրենք՝ նուիրէին. երեւի թէ և իրենց
նախնեաց հոգիներուն ձայները լսէին Սօսեաց
սօսափման մէջ, և աւելի կամ պակաս պաշտօն
մատուցանէին ։ — Կուռք և պատկերք չառ-
տուածոց և նմանեաց՝ կոտորեցան կործանեցան
անյայտ եղան. Սօսին՝ դեռ դալար և կենդանի
մնայ, և իրեն պէ՛տ հազարամիսայ սերունդներ
արձրկէ, որովք մարդկան մտաց յիշատակներն
այլ անշիջ մնան ։ Անցեալ դարու Ջուզպեցի
վարդապետ մի զրէ թերափառ ազգայնոց ոմանց
համար, թէ « Մեծամեծ ծառոցն համբուրեն,
» եթէ Սուրբ կայ ի վերայ » . կայ ըսող որ ին-
չուան հիմայ այլ այդ մեծամեծ ծառոց գտուած
կողմերում՝ գտուին և չափէ աւելի պատուողք ։

Միայն Սօսին չէր պատուեալ և պաշտեալ
ի Հայոց. կային անշուշտ և ուրիշ ծառք, որոց
մէկ նշանաւորն և քրիստոնէութենէ շատ դար
վերջն այլ, էր Բարսի. զոր յատուկ պատուէին
Արեւորդիք կոչուած կէսկէքն կրօնիք, մին-
չեւ ց'ԺԲ դար, և այլ ետեւ. ինչուան հիմայ
այլ գտուին այդ աղանդաւորք. և թէ Հայ չեն
ճանչցուի, բայց անոնց հայրերը կամ հօրեղ-
բայրք՝ այնպէս ճանչնար մեր Ս. Շնորհալի
Հայրապետին, առ որս և գրէր և վկայէր, թէ
« Այդ ծառ՝ որ Բարսի անուանի՝ ի կռապաշ-
» տութեան ժամանակն ի պաշտօնն առեալ էր,
» յորս՝ և Դեռք մտանէին, և ի մարդկանէ եր-
» կրպագութիւն ընդունէին », և այլն ։ Ի՞նչ
մտօք հիններն կու պաշտէին զայն. — հաւան-
օրէն անոր գեղեցիկ սուղուլիկ և երկնածիք
ձեւին համար. իսկ իրենց Արեւորդիքն՝ համա-
րելով թէ Քրիստոսի Խաչն Բարսի փայտէ ե-
ղած ըլլայ, Շնորհալին զգուշացնելով կ'ըսէ.
« ԶԲարսի ծառն՝ մի՛ աւելի պատուէք քան
» զՈրդին և զԿաղանկաւորին և զայլս ի ծառոց,
» և մի՛ կարծէք թէ փայտ խաչին Քրիստոսի՝
» Բարսի էր » ։

Այս ծառոց պաշտաման վրայոց աւելի վկայութիւնք չեն գտուիր ի պիրս մեր՝ ի յետին դարս. բայց շատ բան գրուած կայ քանի մի տեւակ փոքր բուսոց և ծաղկանց համար ի Ռժշկութան, յԱլլթարս, յԵրզրահանս և ի Գրաւանակս, որոց դեռ հաւատացողք և փնտռողք գտուին. և թէպէտ այսպիսի սնտաի հաւատք և կարծիք գտուած են և գտուին դեռ ուրիշ ազգաց մէջ՝ և ինչուան մեծգլուխ Գերմանացոց, այլ յատուկ պնդութեամբ պատուած և պատուի ի Հայոց՝ Լօշտակ կոչուածն՝ ծանօթ շատերու, (Bryonia Alba կոչուած ի Լատինաց, Bryone commune փամ Vigne blanche ի Փոանկաց), իր երկնիւղ արմատին՝ մարդոյ բարձից և սրունից նմանութեանն համար, որոյ վրայ կ'աւելցրեն խաբեբայք ուրիշ նմանութիւններ այլ, տաշելով և կոկելով, (ինչպէս կ'ընեն նաեւ ի Գերմանիայ). և այսոր համար կ'անուանեն Մարդաւտակ, Մարդախոտ, Մարդա-ծաղիկ. և այլն: Մերայնոց շատ թիւր և դիրաւ հաւատ գրածները թողլով, յիշենք պտղոցն համար բուսնին, որ սեւ ու կարմիր են, և երեք, չորս կամ վեց մէկտեղ կ'ըլլան ճրդին վրայ. « Թէ մարդ պահու յիրմէտ, (գրեն Ալլթարք), » չորս հատ՝ ոչ աւել և ոչ պակաս, և ի նոր կտաւ ծրարէ, և ի սարօսափոտին (հիւանդի) » վրայ կենայ՝ ողջանայ Աստուծով. . . Հանց չնորհչ առնու ի սմանէ (մարդ) և բան և միտք, » որ կարէ գիտել զերկնային և զերկրային յատկութիւնք. » և պատուիրին մայիս ամսու քաղել զտակն՝ սահմանեալ աղօթելով, Թագաշոր ամենայն խոտից կոչելով զնա. իբր « զի Աստուծոն » — Գարձեալ կ'աւելցրեն, թէ « Ասացել են (առաջին խելացիքն) թէ այս խոտս Սողոմոնի մատաւաճ առնէ. և ասկից ամենայն զագանք և սողունք ի հրաման կենան. և Աղեքսանդր թագաւորն այս խոտով » շատ բան և Թագաւորութիւն վարէր », և այլն. — Լօշտակին՝ Մանրագորի հետ ունեցած կամ կարծուած յարճնութիւնը թողումք քննութեան բուսաբանից և բանասիրաց :

Թերեւս քան զԼօշտակն առնաւոր է Փննուայն (Pæonia կամ Betonica Orientalis), որ իր մեծ արծախաւորութեանն համար՝ տասնեակներով անուններ այլ ունի, որոցմէ է

և Խաչափայտ և Քահանայոյն կամ Քահանայատակ. « զի երբ կտրես, կ'ըսեն վերոյիշեալ գրիչք, մէջն զէտ խաշ է ». այսոր համար այլ սահմանեալ են աղօթք և ակտութեան կարգալ՝ հանելու տոնն, իր շատ հրաշագործ օգուաներուն համար. զի, « Թորժամ ծխես (զայն) » դեւն փախի. թէ զարմատն տերեւոյն ծխես, » ոչ դեւ և ոչ չար շմերձենայ ի քեզ և ոչ ի տուն քո », և այլն : Եւ թէ յիբք մի շարեն զայն(որ) սեւ հունտն՝ և տղոցն ի վիզն կանխեն, » օգտէ ընտաւորին (չունտտի)... և այնոց՝ որ յանկայր վայրիքն շուրջ գան՝ ի վիզն կանխեն, շատ օգտէ » : Բոտ հին աւանդութեանց, մեր ԺԲ դարու դիւանական առակախօս Միխիթար Գոշ վարդապետն այլ խմբեցնէ, որ « փնենա զանձն սրբաւէր ասէր լինել », իսկ յաջորդ դարու Բժշկարանք և Ալլթարք կատարեալ Մշտոցի ծիսից և աղօթից նման կանոն մի գրեն փննունա հանելու եղանակին, խաչիւ, անտարանաւ, խնկով, մոմով, և այլն. աղօթից մէջ այլ սկսելով յիշել « զմարդն առաջին, զոր նախանձեալ չարն խաբեաց զծաղ » բամիտ կինն՝ ճաշակմամբ պտղոյն. և ելեալ ի դրախտն՝ անկաւ յերկիր անիծից և ցաւոց. և ազադակեցին առ քեզ, Տէր, և ցուցեր նոցա ծաղիկս և պառլաւս, խոտս և արմատս, ի բժշկութիւն մարդկան. ետուր՝ և զգօրութիւն շնորհի քո ի փննունայս յայս, » ի ձեռն ծառայի քո մեծին Մովսիսի » : — Ստոյգ է բուսոց բժշկական զօրութիւնն, զոր դիպուածով կամ փորձով գտան մարդիկ. բայց ստուգութեանն վրայ ո'չափ անստոյգ և սուտումուտ բաներ աւելցուցած են նանրահաւաւորք. և եթէ Հայք ծիսական կարգ կամ կանոն մի գրեն են, արեւմտեայց մէջ ամբողջ գիրք կայ գրուած իրենց սոյն Բետոնիկայի (Betonica) համար. իբրաւ որ շատ հեղ ստան ճշմարտին, սոցիալութիւնն գիտութեան ետեւէն կ'երթայ՝ իբրեւ անոր շուքն, և շուքի պէս այլ աւելի մեծ և երկայն կ'երեւի. արժէքն այլ անկէ աւելի չէ :

Լօշտակի և փննունայի հետ՝ երրորդ զարմանալի և սրբազան ծաղիկ մ'այլ ունեցեր են Հայք, և Թերեւս սեփական հայկական, թէ և ոչ քաջածանօթ. այս է Համասպիւռն, որ և Համասպարամ. որ բոտ վերոյիշեալ վարդապետ

ախն և բոտ իր անուանակից և գրեթէ ժամա-
նակակից մեծ բժշկին Միս. Հերացուց, « մի ար-
» մատ ունի և արձակէ բազուկս 12, և ունի
» ամէն մէկ գոյն մի ծաղիկ այլեւայլ, կապուտ
» և ծիրանի, շուշան, և այլ ամէն գունից զար-
» դարեալ է », և այլն։ Ամառը կու ծաղկի
Համասփիւռ, բայց գտնելու համար՝ « պարտ
» է խնդրել զծաղիկն ի գիշերի, զի ի գիշերն
» պայծառագոյն երեւի ի յաչս խնդրողաց »։
Բուսաբանութեան թողումը ծաղկան գոյներն և
ուրիշ յատկութիւնները նկարագրել, գտնելու
տեղութեանն, և ինչ ցեղի բոյս ըլլալը. որ հա-
ւածօրէն է *Lychnis kottianensis*, և յատ-
կապէս *Lychn. Orientalis*. զոր անցեալ դա-
րուն սկիզբը տեսաւ և ստորագրեց հռչակաւոր
փռանկ բուսաբանն Տուրնեֆոր (Tournefort).

Ի հարկէ այս երեքէս զատ ևս և այլ քիչ
շատ զարմանալի յատկութիւն ունեցող բոյսը՝ ի
Հայս, ինչպէս ամէն ազգաց մէջ, զորս աւե-
լորդ համարիմ՝ քննել և գրել. շատ ըլլայ յի-
շել միայն զԵրեւանն և զԵրեւանիտակն, որոյ
անուն բոտ իս աւելի զարմանալի է. վասն զի
զուտ հայերէն լսուի, և սակայն լատինն այլ
Eryngium կոչէ, յորմէ փռանկն այլ *E-*
rynge, այլ և *Panicaut*. Արդ, ասոր համար
այլ քրեն մեր աղթարաբանը. « Ոյ զիր տակն
» ի հետ պահէ՝ ամենեւին դիւական չար չմեր-
» ձնայ յինքն. թէ ուզես որ իմանաս զգօրու-
» թիւն սորա՝ գի՛տ չար դիւահար մի, և տա՛ր
» ի սորա տակէն, և մերկիկ ի վերայ սրտին
» դիր. առե՛լ տայ դիւին թէ ուստի՝ է կամ է՛ր
» է մտել. փախչի ի խաւարն արտաքին »։
— Թող մնայ հոն։

Այս վերջի բուսոյ անուանէն և ուրիշ յիշա-
տակներէ, և ընդհանուր բուսոց բազմաթիւ և
նշանական անուններէն հետեւի, բոտ մեզ,
որ շատ հնուց մնած է ի Հայս ծանօթութիւն
բնութեան բուսոց, անոր հետ և աւելորդ և
սնտի կարծիք և հաւատք. և գուցէ օտարնե-
րէն ռաճանքներն աւելի՝ իրենք այլ առ օտարս
մտոցեր են իրաւ և սուտ ծանօթութիւններ.
մանաւանդ եթէ ստոյգ է Արաբացի հեղինակի
մի աւանդութիւնն, ամենէն հին բուսաբանա-
կան կամ երկրագործական պրոց մէջ, թէ Հայ-

կազանց և Բաբելացոց կամ Ադորեստանայց
ժամանակ Յամբուշատ անուամբ Հայ մի գրած
ըլլայ այս գիտութեանց վրայօք։ Թէ ոչ անկէ՝
այլ Յունաց և յետոյ լատին հեղինակաց գոր-
ծոց մէջ այլ կան ոչ սակաւ բուսական տեղե-
կութիւնք, նաեւ առասպելախառն, որ ի Հայոց
աւելուած են՝ ո՛ր և է եղանակաւ. ինչպէս Պլու-
տարքոսի յիշած Երասխայ ափերում, և անոր
անուամբ գտնուած բոյսն Արաքսա (*Araxa*), որ
տեղացեաց լեզուաւ՝ կուսահալած թարգմանուի
եղեր. իբր թէ երբ կոյս մի մօտենայ անոր՝
ծաղիկն արին ցայտելալ՝ թողմի չորսայ եղեր՝
Մեծ բնագէտն Լատինաց՝ Երէցն Պլինիոս այլ
յիշէ Ադամանտ (*Adamantis*²) բոյս մի կա-
խարդական զօրութեամբ, որ ի Հայաստան և
ի կապպադովկիա գտուէր. թէ որ առիւծու մի
մօտեցընէին զայն՝ զազանն բերանաբաց կ'իսկ-
նար ի գետին։

Նոյն Պլուտարքոս նոյն Երասխայ կողմերում
յիշէ իրմէ հին կտեսիփոն անուն պատմէ և
բուսաբանէ մ'առած. կ'ըսէ, թէ յառաջ յիշեալ
(երես 11) Դիորփոս (*Διορφος*) լերան քովերը
համանուն ծառ մի կայ եղեր, պտղով՝ նոան
նման՝ բայց խաղողահամ. ոսկից թէ մէկն կե-
ղեւէ և հատ մի առնու ի ձեռքն՝ և Արե՛ս
կանչէ (թերեւ Հայոց Արայն կամ Արեւ), մէ-
կէն պտուղն ի կանաչ փոխուի։ — Աւելորդ
համարիմ յիշատակել ուրիշ բուսոց և ծաղկանց
այսպիսի սնտախ յատկութիւնները, մանաւանդ
որ մեր հեթանոս հարց համար յիշուած չեն,
այլ ի յետին և ի քրիստոնէութեան զարբեր։

(Շարայարեղի)



1. Մեր գիտցած լեզուով չեմք կրքնար ստու-
գարանել այս անունն, բայց եթէ բառին վերջի
կէսը կոյս լսելով, առաջինն այլ հետի, կամ
նման յարմարութիւն մի։

2. *Aliam (herbam) Adamantida, Armeniæ*
Cappadociæque alumnæ: hac admota leones
resupinari cum hiatu laxo: nominis causam
esse, quod conteri nequeat. — Պլին. Ի. 1, 64.